ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳԵՐԸ

ՅԱՒԵԼՈՒԱՆ [1]

(Ա· ԽՈՒՄԲ)

Այս խումբին մէջ պէտք է դասել գորգագիտութեան Սիլէ անունով ծանօթ գորգերը, որոնք համանուն քաղաքն կամ շրջակայքը գործուած են։ Սիլէի մէջ հայկական դաղութ մը կար ժէ· դարուն· Մեծ Պատեթեղանին թելերը երանդադաշտի վերջաւորութեան կարուած են։ Սպիտակ դաշտերն ու շրջագիծերը միայն բամբակէ են· ամբողջ գորգը ոչխարի բուրդէ է· հիւսուածքը այնպէս խիտ է, որ հանդուցուած գորգի չափ ամուր է։ Յետսակողմ նոյն է առաջակողմին հետ։

Գործածուած են կանանչ, սպիտակ, բաց ու մութ դեղին, կարմիր, երեք տեսակ կապոյտ եւ մութ թուխ ներկեր։ Գծագրական



ՏԱԽՏ· Ա·



ՏԱԽՏ· Բ·

բազմի սկիզբը մօտ 4·000 հայ, 10·000 թուրք բնակիչ կը հաշուէր։

Այս գորգերը իրենց զարդարուեստի տեսակէտէ պէտք է նկատել անասնամորթ-գորգերու վերջին հետեւորդները։ Սիլէի գորգերը հիւսուած են· վերին տեսանելի թեղանը կոչտ է ու բազմապատիկ ոլորած· մինչ հիմքի թեղանը շատ բարակ է, չափազանց պիրկ, գրեթէ անտեսանելի· հիմքի գլխաւոր ազդակն է մեծ, երիզաձեւ Տ մը, գլուխին վրայ ունկի կամ եղջիւրի տեսանելի յաւելուածով· պատկերին ոճնակոմ որոշապէս ճանաչելի են ծայրանդամները· պատկերին ամբողջ մարմինը ծածկուած է խայտերով, երկրաչափական Տ տիպերով, շեղկանոներով կամ պարոյրներով։ Տ-ի ձեւով մեծ պատկերներ աջ ուղղուած կը կենան չորս չորս քով քովի· վերի շարքին առաջին Տ-ը մութ է, երկրորդը պայծառ, երկրորդ շարքին մէջ մութ Տ-ի տակ կը կենայ բաց Տ մը եւ փոխադարձաբար։

[1] Յաւելուլ գերմ· բնագրին Z. Hofrichter, Armenische Teppiche, Wien 1937, S. 12 եւ հայ· թարգմանութեան, Հանդէս Ամսօրեայ, 1937, էջ 163։

Գորգերու հիմքը սովորաբար կարմիր է· կաւկասեան նախնական անասնատիպեր, ձի, շուն, ու փոքրիկ իշուկներ կը վազեն աջէ ձախ։ Տրէզը ինչպէս մեծաթիւ հայկական գորգերու վրայ՝ նեղ է եւ ներքին մեծ դաշտին հետ անչափակից։ Ինչ ինչ գորգեր երկայնքին երկու կտորէ կարուած են։

Մեծութիւն իրը 260 × 180 cm.։

Z. HOFRICHTER Թրգմ· Հ· Պ· Է·

ՄԽԱՐԳՐՃԵԼԻ-ԱՐՂՈՒԹԵԱՆ ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՀՄԸ

Վրաստան՝ ԺԲ· եւ ԺԳ· դարերում իր պատմութեան ամբողջ շրջանի մեծագոյն յիշատակութեան արժանի քաղաքական եւ մշակութային ծաղկեալ վիճակն է ունեցած։ «Հարց է թէ, գրում է Էջմիածնի Արարատը, այս ծաղկեալ վիճակն արդեօք աւելի իր բնի՞կ ժողովրդի քաջութեանն եւ իւր իշխանների՞ պատերազմական հանճարին է պարտական, թէ այն խոհեմութեանն, որով սոցանից ոմանք իմացան օգտուիլ Հայոց պատրաստ, դարաւոր փորձութեան մէջ եփուած ոյժից [1]»։

Պատմական անհերքելի փաստ է, որ Անիի թագաւորութեան անկումից յետոյ՝ «հայ զօրավարներն եւ զօրաղնդերը, ուրիշ յարմար տէր չգտնելով (իրենց դրացի) հիւսիսային քրիստոնեայ իշխանների (Վրաց) շուրջը խմբուեցան եւ արեան դաշտում փառաց պսակներ վաստակեցան նոցա համար [2]»։

Այս կարեւոր գինակցութիւնը հաստատում է նաեւ Վրաստանի Պատմութեան համբաւաւոր զաղղիացի հեղինակը, Բրոսէ, այլեւայլ պարագաներում։ Նոյն իսկ նորագոյն նշանաւոր գրողներ, լսելով անձամբ տեղացի կենդանի պատգամաբերներից, վկայում են թէ «Թամարի թագաւորութեան ժամանակ, Վրաց Եկեղեցին եւ Տէրութիւնը մի շարք ականաւոր պետեր են ունեցած, որոնցից շատերը հայեր էին։ Բանակի հրամանատարը հայ էր Սարգիս Մխարգրձելի անունով· նրա հետ էին իր երեք ազգականները, որոնց մէկն էր Դաւիթ Սոսլանի, Թամար թագուհու երկրորդ ամուսինը [3]»։

[1] *Արարատ, էջմիածին* 1903, *էջ* 87։
[2] *Անդ։*
[3] Nansen, *Անդ, էջ* 102։

Վրաց բանակին յարող հայ զինուորականների մէջ ամէնից նշանաւորն հանդիսացաւ Խոսրով, Արղութեան Երկայնաբազուկ ապագայ իշխանական տոհմի նախահայրն, որ այնուհետեւ սկսել էր պաշտօնապէս կոչուիլ վրացերէն՝ Արղութիս-շվիլի (Արղութի որդի) Մխարգրձելի կամ Մխարգրձելաձէ։ Այս վրացերէն բառը նշանակում է լայն ուսեր ունեցող կամ լայնաթիկունք։ Այս Խոսրովի որդին էր Աւագ Սարգիս, որին, ինչպէս Վրաց Տարեգիրքը պատմում է, Թամար թագուհին իր զօրքի հրամանատար էր կարգել, ի նկատի ունենալով ոչ միայն նրա ազնուական ծագումն, այլ եւ «իբրեւ պատերազմի մէջ փորձուած հերոս»։ Թագուհին նրան շնորհել է Լօռին (Վիրահայքում) իբրեւ ժառանգական կալուած եւ տուել է Սոմխէթի մթավար (Վիրահայքի պետ) տիտղոսը [4]։

Սարգսի մահից յետոյ Թամար՝ Վրաց բանակի հրամանատարութիւնն՝ ամիր-սպասալար տիտղոսով յանձնել էր նրա որդի Զաքարէ կամ Զաքարիային, որ լիովին արտայայտած է թագուհու վստահութիւնն եւ մեծ ճարտարութեամբ եւ քաջութեամբ ղեկավարած բոլոր ճակատամարտներ Վրաստանի եւ միանգամայն Հայաստանի թշնամիների դէմ։

Թէ Զաքարիա եւ թէ նրա եղբայրը Իվանէ, թագուհու թիկնապահական խումբի պետը, պահում էին իրենց ընտանեկան հայ դաւանութիւնն եւ «քաղկեդոնիկութիւն» չէին ընդունել, ինչպէս էին վրացիք եւ Վրաստանում բնակող ուրիշ հայերի մեծ մասը։ Այս խարութիւնն աչքի փուչ էր դարձել վրացի հոգեւորականութեան, որ ամէն ջանք սկսել է գործ դնել, որ նրանք վրացիների կրօնն ընդունին։

«Իվանէ, գրում է Տարեգիրքը, որ շատ հմուտ էր Ս· Գրեանց, իր կրօնի ստութիւնը հասկանալով, մկրտուեց եւ ճշմարիտ քրիստոնեայ դարձաւ»։ Իսկ Զաքարիա, որ բանակի սպարապետն էր, մերժել է իր հայ դաւանութիւնից հրաժարուիլ։ Ի նկատի ունենալով Զաքարիայի անձնաւորութիւնն եւ բարձր դիրքը, վրացի կաթողիկոսը նրան համոզելու համար հետեւեալ միջոցին է դիմել·

«Թէ Զաքարիա եւ թէ Իվանէ, բոլոր ա-

[4] Brosset, Histoire de Géorgie, 1ère partie, էջ 387։

© National Library of Armenia

ոաջնակարգ վրացիք, եւ հոգեւորականութեան ներկայացուցիչները, կաթողիկոսն եւ եպիսկոպոսները, ժողովուած էին թագուհուքով, պալատում: Կաթողիկոսը հաղորդութեան սուրբ հացն էր բաշխում ներկաներին, նրանք որոնք արժանի էին մերձեցան եւ ճաշակեցին: Երբ Զաքարիա սպարապետն եւս ուզեց հաղորդուել քահանաները չթողին, որովհետեւ նա հայադաւան էր: Զաքարիա ուզեց բռնի առնել սուրբ հացն եւ ճաշակել: Բայց կաթողիկոսը կրակ կտրած խիստ կերպով յանդիմանեց նրան...: Զաքարիա ճակատը կարմրած, հեռացաւ ժողովից եւ մտաւ իր վրանը: Երեկոյեան նրան հրաւիրեցին պալատ, ընթրիքի: Զաքարիա հակակրօնական խօսքերով դիմեց կաթողիկոսին, որ պատասխանեց «Հոգւով Սրբով ոգեւորուած»: Զաքարիա տեսնելով, որ անկարող է պատասխան տալ, ասաց կաթողիկոսին. «Ես մեծացած եմ զօրքի մէջ եւ անհմուտ եմ կրօնական հարցերում, որպէս զի կարողանամ հարկ եղած պատասխանը տալ. կանչէ մեր (Հայոց) վարդապետներին. նրանք կարող են իմ տեղը պատասխանել: «Թող Քրիստոսի եւ Աստուածամօր կամքը լինի» ասաց հայրապետը: Իվանէ աշխատում էր համոզել իր եղբօրն, որ համակերպի եւ այդպիսի վիճաբանական միջոցի չդիմէ, բայց Զաքարիա չի լսում իր եղբօր յորդորին եւ որոշում է հայ հոգեւորականութեան պետերը հրաւիրել Վրաստան»:

Զաքարիա դիմում է Հայաստան Մխիթար Գօշին, որ իր կողմից դիմում է Հայոց կաթողիկոսին: Կաթողիկոսական աթոռն այն ժամանակ գտնւում էր Հռոմկլայ եւ Սիս, Կիլիկիայում:

«Յորժամ ի Հռոմկլայ եւ ի Սիս էին կաթողիկոսութիւնք Հայոց, կամակցութեամբ մերոց թագաւորաց, յայնժամ էին յարեւելս Մխիթար՝ մականուամբ Գօշ կոչեցեալն, որ զարեւելեան Զաբարիա իշխանին խնդիրքն յղեաց ի Սիս, առ առաջին օծեալն Լեւոն (արքայ) եւ առ կաթողիկոսն Հայոց Յովհաննէս, զոր նոցա ժողով արարեալ կատարեցին զխնդիրն» (Թուղթ Սիմէոն Սսոյ կաթողիկոսի առ Փիլիպպոս Էջմիածնի կաթողիկոս) [5]:

«Զաքարէ եւ Իվանէ եղբայրները, շարունակում է Արարատի յօդուածագիրը Յուսիկ եպիսկոպոս, Վրաց Աբքունիքում մեծ նշանակութիւն (կարեւորութիւն) ունէին: Հայ եւ վրացի զինուորների միջից ոտների առիթով տարաձայնութիւններին վերջ տալու համար, խնդրել են Յովհաննէսից, Մեծարարոյ կոչուած կաթողիկոսից, որ Ս. Աստուածածնայ Վերափոխման եւ Խաչվերացի տօները Վրաց հետ միասին տօնեն եւ վրանի տակ շարժական սեղանի վրայ պատարագ մատուցուի: Այդ ժամանակ Յովհաննէս Մեծարարոն Հռոմկլայ էր աթոռուած եւ Լեւոն Բ. թագաւորի հրամանով Դաւիթ Գ. օծուելով, Սիսում վարում էր կաթողիկոսական իշխանութիւնը: Ուստի նրա նախագահութեամբ գումարուեց Սիսի Ա. ժողովը 1204ին: Ժողովը Զաքարէի խնդրին բաւարարութիւն տուեց եւ այս որոշումն յատուկ պատգամաւորի ձեռքով ուղարկուեց Զաքարէին: Սակայն Զաքարէի հրամանով հաւաքուած Լօռու ժողովը 1205ին եւ Անւոյ ժողովը՝ Դ.ն, 1207ին չընդունեցին Սիսի ժողովի որոշումները: Մխիթար Գօշ իւր երկդիմի վարմուքով եւ Խաչատուր Տարօնեցին՝ «Խրհուրդ խորին» շարականի հեղինակը, լուսեւոյն քաջալերում էին Զաքարէին»:

Անսայով Զաքարիայի յորդորին, Հայ Եկեղեցին յատուկ պատգամաւորութիւն է ուղարկում Վրաց արքունիքը, կրօնական վիճաբանութեան մասնակցելու համար: Հայ հոգեւորականութիւնը պատշաճաւոր յարգալից ընդունելութիւն է գտնում թէ թագուհու եւ թէ ժողովրդի կողմից:

Սկսում է պալատում, Թամար թագուհու ներկայութեամբ երկու կողմերի մէջ, կրօնական վիճաբանութիւնը: Միշտ ըստ Վրաց Տարեգրքին, խօսքը տալիս են նախ հայ հոգեւորականներին, որոնք «երկարօրէն եւ ճարտասանութեամբ պաշտպանում են իրենց հաւատքը»: Վրաց կողմից կաթողիկոսն է խօսում եւ Հայոց բոլոր առարկութիւններին պատասխանելուց յետոյ սկսում է խրատ կարդալ. «Դուք, ո՛վ Թորգոմի տուն, ասում է նա, չդիտէք, որ սատանան մարդկային հոգիներն այն աստիճան գերեց եւ մոլորեցրեց, որ մարդիկ մինչեւ իսկ սոխին ու սխտորին գոհ էին մատուցանում...»:

Այս «յառաջաբանից» յետոյ Վրաց կաթողիկոսը հարկ է համարում պարզել ի դիտութիւն Հայոց՝ թէ ի՞նչ է Մարդեղութեան Խորհուրդն եւ Ս. Հաղորդութեան էութիւնը, որին հայ կղերը պատասխանում է երկու խօսքով միայն՝ «Այդ ամէնը ճիշդ է»:

[5] Արարատ, 1904, Մայիս:

Այս դէպքերից վերջ Իվանէ գնում է կաթողիկոսի մօտ, եւ նորից մկրտուելով ընդունում է վրացական դաւանութիւնը: «Շատ հայեր, չարունակում է Տարեգիրքը, հետեւեցան Իվանէի օրինակին, որ ընդհանուր ցնծութիւն պատճառեց»:

Զաքարիա սպարապետ կամ «ամիր սպասալար» ինչպէս նա կոչւում էր պաշտօնապէս, վախճանել է 1212ին, խորին վիշտ պատճառելով թէ Թամար թագուհուն եւ թէ Վրաստանի բոլոր բնակիչներին: Վրաց Տարեգիրքը գրում է. «Մի դժբախտ դէպք պատահեց. Զաքարէ սպարապետը վախճանուեց, մի մարդ, որ մեծապէս յարգուած էր եւ որ բոլոր առաքինութիւններով օժտուած: Իր ժամանակակից բոլոր մթավարների (պետ) մէջ նա նշանաւոր էր հանդիսանում ոչ միայն իր քաջութեամբն, այլ եւ իր ազնուական ծագումովը, որովհետեւ սերում էր Արտաշէս Երկայնաբազուկից: Նա դաւանութեամբ հայ էր. աստուածային եւ մարդկային բոլոր առաքինութիւնները վայելում էին նրա մէջ»:

Զաքարէ մի որդի էր միայն թողել: Նրա մահից յետոյ Թամար կամենում էր սպարապետութեան պաշտօնը յանձնել նրա եղբօր, Իվանէին, որ մասխուրների (թագաւորական թիկնապահ խումբի) պետն էր, բայց Իվանէ հրաժարւում է, անարժան համարելով իր անձն այդ բարձր պաշտօնին: Թագուհին նրան տալիս է աթաբէգ տիտղոս, որ նշանակում էր «թագաւորների սնդատու հայր»: Այնու ամենայնիւ երբ Վրաստանի մթիուլ, փխոյել եւ դիդօ ցեղերն ապստամբում են եւ կողոպուտներ սարքում, Թամար թագուհին Իվանէին է յանձնում այդ աւազակաբարոյ լեռնցիներին պատժելու եւ խաղաղեցնելու գործը: Իվանէ ուրիշ հաւատարիմ լեռնականներից բանակ կազմելով ճնշում է ապստամբներին եւ երկիրը խաղաղեցնում:

Հայաստանի եւ մասամբ նաեւ Վրաստանի մէջ կան բազմաթիւ յիշատակարաններ Մխարգրձելաձէ Զաքարէ եւ Իվանէ սպարապետներին ի պատիւ կանգնուած: Յառաջ բերենք հետեւեալները:

Հաղբատ վանքի (Շիրակում) արեւելեան պատի վրայ կայ այս երկու հայազգի՝ վրացի պետութեան սպարապետների արձանը: Հայերէն արձանագրութիւնը յիշեցնում է, որ «Զաքարէ՝ Վրաստանի եւ Հայաստանի ամիր սպասալարը» գնել է Յաղբատայ վանքն, որ միեւնոյն ժամանակ Ղազչավանք [6] էլ է կոչուել, իր եւ իւրայինների հոգու փրկութեան համար, 1201ին, «բարեպաշտուհի Թամար թագուհու» ժամանակ:

Սանահին գեղի յանուն Աստուածամօր եկեղեցու վրայ կայ հայերէն արձանագրութիւն, ոմն հայր Յովհաննէս Խաչէնցի, որ այնտեղ ապաստանարան է կառուցել Զաքարէի եւ Իվանէի երկարակեցութեան եւ իր հոգու փրկութեան համար [7]:

Հաղբատի վանքի մի արձանագրութեան մէջ ասուած է, որ Աւագ Սարգիս 50 ոսկի է պարուել Ս. Նշան եկեղեցուն, իր պապի Խոսրովի եւ եղբօրը Քարիմի յիշատակին սուրբ Եղիայի օրը պատարագ մատուցանելու համար [8]:

Ամէնից հետաքրքրականը Անի գտնուածն է, քաղաքին մօտ Խաչավանքի (կամ Հոռոմոսի) տաճարի վրայ փորագրուած է հայր Մխիթարի ձեռքով, որ «սատարութեամբ Սարգսի կրաւնաւորի եւ կամակցութեամբ սուրբ միաբանացս Ջրուղի շինելով ականց ջուր է բերել Հոռոմոսի վանքը, ի հայրապետութեան տեառն Բարսղի եւ ի տէրութեան վանացս քրիստոսասէր պատրոնացս Գրիգոր հեճպին եւ Սմպատա եւ եղբարց իւրեանց եւ ի տէրութեան քաղաքիս եւ բոլոր երկրիս մեծ Հայոց՝ Քրիստոսի մեծ զարականացս Զաքարէի եւ Իւանէի, որոց հովանի լիցի սուրբ Երրորդութիւն»: Թուականն է 1198 (ՈՂԷ):

Այս թուականից 6 տարի յետոյ, այն է 1206ին (ՈԾԵ) նոյն ինքն Զաքարէ սպասալարն է փորագրել տուել միեւնոյն Խաչավանքում հետեւեալ արձանագրութիւնը. «Ի ՈԾԵ թվիս ես Զաքարիայ շահանշահ որդի Սարգսի՝ զարապետ Հայոց եւ Վրաց, քակեցի զՋրագացն, որ յԱկանս հակառակ Ջրիս չլինած էր եւ վերստին հաստատեցի զՋուրս ի վանքս Հոռոմոսի վասն արեւչատութեան ինձ եւ եղբաւր իմոյ Իւանէի եւ յիշատակ ծնողաց մերոց. արդ եթէ ոք հակառակ կայ Ջրիս եւ

[6] Այսպէս կոչուել է, երեւի այն պատճառով որ վանքի հիմնադիրը ղազչաղ (թաթար) էր: Ղազչաղների անունը շատ անգամ է յիշուած Վախթանգի Տարեգրքում:

[7] Սանահին գիւղը վաղուց ծառայել է իբրեւ սեպհական ամառանոց Արզութեաններին: Այժմ էլ բնակւում է այնտեղ նրանց սերունդի մեծագոյն մասը, ապրելով պարզապէս իբրեւ հայ գիւղացի, թէեւ միշտ իշխանական տիտղոսը պահելով: Սանահին իր բարձր դիրքովը, շրջապատի անտառովն եւ այլ բնական յարմարութիւններովն իրօք սքանչելի ամառանոցի վայր է, ինչպէս անձամբ այցելել եւ դիտել եմ 1907ին:

[8] Կ. Զալայեանց, Ճանապարհորդութիւն, Թիֆլիս 1842, էջ 63:

© National Library of Armenia

յափշտակել ջանա ի վանացս եւ կամ դարձեալ չինէ զքաղացն զաւէն զԿայէնին զՅուղային զխաչահանացն զանէծսն առցէ եւ մի զոցէ մասն եւ ողորմութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ. հրամանակատարքն աւրհնեսցին ի սուրբ երրորդութենէն [9]»:

Վրաստան՝ ԺԸ. դարում խորին ճնշուած էր իր վրայ տիրող Պարսկական իշխանութիւնից, որից ազատուելու համար Իրակլէ (Հերակղէս) Թագաւորը դիմեց հիւսիսային քրիստոնեայ մեծ պետութեան պաշտպանութեան եւ 1783ին դաշնադիր կապեց Կատարինէ Բ. Մեծ կայսրուհու հետ: Այս մասին ընդարձակօրէն պիտի խօսուի իր տեղում: Այս դաշնադրի 9րդ յօդուածի համաձայն «Վրաստանի թաւադները (ժողովրդի պետ, իշխան) եւ ազնաւուրները (ազնուական) միեւնոյն աստիճանն եւ դիրքը պիտի ունենային ինչ որ բուն Ռուսաստանի իշխաններն եւ ազնուականները»: Ուստի, ի գործադրութիւն այս յօդուածի, Վրաց Թագաւորը ցուցակ կազմեց այն բոլոր իշխանական եւ ազնուական տոհմերի, որոնք բնակւում էին Վրաստանում իբրեւ վրացի քաղաքացիներ, եւ ներկայացրեց ռուսական կառավարութեան: Այս ընդհանուր Ցուցակի մէջ մտել էր նաեւ Զաքարէ սպարապետի սերունդը, վրացերէն Արղուբաս-շվիլի Մխարգրձելի (Արղութի որդի լայնաթիկունք) մականունով: Այս տոհմից էր Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեան, ապա կաթողիկոս էջմիածնի, (ծն. 1743, վախճ. 9 Մարտ 1801), նշանաւոր քաղաքագէտն, որ Ռուսաստանին մեծ ծառայութիւններ էր մատուցել դեռ այն ժամանակ երբ Կովկաս չէր ենթարկուած ռուսական իշխանութեան: Իբրեւ փոխարինութիւն այս ծառայութիւններին՝ Պաւել կայսրը 1800 թ. Մարտ 22ին հրովարտակով, նրան եւ նրա եղբայրներին ու եղբօրորդիներին ռուսական իշխանական տոհմի տիտղոս էր շնորհել ժառանգական իրաւունքով:

Հետաքրքրական է այս հրովարտակն, նաեւ այն կողմից, որ այնտեղ Յովսէփ արքեպիսկոպոսի կողմից պարզուած են այն հիմունքն, որ ծառայել է իշխանական տիտղոսի իրաւունք ստանալու համար: Յառաջ եմ բերում թարգմանօրէն այդ հրովարտակն ամբողջովին:

[9] Սարգ. եպ. Ջալալեան, Ճանապարհորդութիւն ի Մեծ Հայաստան, Հատոր Բ., էջ 25—26:

Մենք, Պաւել (Պօղոս) Առաջին, ողորմութեամբն Աստուծոյ կայսր եւ միապետ Համայն Ռուսիոյ, եւայլն եւայլն (կայսերական տիտղոսների ամբողջ շարքը), յայտարարում ենք ներկայումս եւ ապագայի համար, բոլորին ընդհանրապէս եւ իւրաքանչիւրին մասնաւորապէս, որ Ամենակարող Աստուծմէ Մեզ շնորհուած Ինքնակալական իշխանութեան հիման վրայ, ի նկատի ենք առնում այն օգտակար ծառայութիւններն, որ մատուցանում են Մեր Գահին եւ հայրենիքին՝ Մեր հաւատարիմ հպատակներն եւ ոչ միայն հաստատում ենք այն արտօնութիւններն, որ արդէն վայելում են, այլ եւ առանձնապէս ուշադրութիւն ենք դարձնում այնպիսիներին, որոնք բազմարդիւն ձեռնարկներով եւ անընկճելի եռանդով ձգտում են մեր ուշադրութիւնը դրաւելու»:

«Մեր սիրելի, հաւատարիմ հպատակ, Մեր Հայ Ժողովրդի արքեպիսկոպոս՝ Իշխան Յովսէփ Արղութեան-Երկայնաբազուկ (ռուս. Արղութինսկի-Դոլգորուկով) բացատրեց Մեզ, որ իւր տոհմը, ինչպէս հայկական եւ վրացական պատմութեան գրքերը վկայում են, սերում է պարսից արքայ Արտաշէս Երկայնաբազուկից, որ թագաւորում էր 4730ին եւ որի ժառանգները՝ պարսկական գահի կործանումից յետոյ մտել են Հայաստան: Սրանցից Աբշակ մեծը 5010ին տիրում էր պարսկական եւ հայկական թագաւորութիւններին: Նրանից սերող միապետները՝ հայկականները, կոչւում էին Արշակունիներ եւ տեւեցին մինչեւ Կորպենիել (Korpeniel) Արշակունին, որ յայտնի է 1062ին: Սրա Թոռնորդին էր Զաքարիա Սմբատ Սպասալարն, որ շնորհիւ իր ընտիր յատկութիւններին, տիրեց Հայաստանի մէկ մասին, որի մէջն են արքայանիստ Անի եւ Լոռի քաղաքները, որոնց վրայ նա իշխում էր իբրեւ միապետ, հնազանդելով միայն Վրաց Թագաւոր Գէորգին եւ սրա դստեր Թամար Թագուհուն, իբրեւ վերին հրամանատար նրանց բանակին: Այդ տեղերի վրայ շարունակել են իշխել Զաքարիայի որդիքն իբրեւ յաջորդներ: Իսկ երբ նրա Թոռնորդի Շահնշահի ժամանակ, 1250ին, Թաթարաց Հուլով-Խանը յարձակումով գրաւել է նրա տիրած երկրի մեծագոյն մասը, սրա յաջորդ Արղուն Խանը՝ վերայիշեալ Շահնշահի որդին եւ յաջորդը, որ նոյնպէս Շահնշահ էր կոչւում, իր սեպհական անունով Արղուն է կոչել: Այս պատճառով էլ, այս իշխաններն

այնուհետեւ Արղութեան-Երկայնաբազուկ են կոչուել: Այս տիտղոսը, Լոռի քաղաքի եւ Սանահին գաւառի տիրապետութեան հետ միասին, շարունակուել է մինչեւ Յովսէփ արքեպիսկոպոսի հայր Շիոշ բէկն: Նոյն տիտղոսն ունին նաեւ նրա եղբայրներն իշխան Մովսէս եւ իշխան Բեժան, ինչպէս եւ ինքն եւս, մեր այս սիրելի հաւատարիմ հպատակն (արքեպիսկոպոսը), որ 1773ին Հայաստանից եկաւ Մեզի ծառայելու: Նա 1780ին օժանդակեց Խրիմում բնակող հայերի Ռուսաստան տեղափոխուելուն, որոնք բնակութիւն հաստատեցին նրա ջանքերով հիմնուած Նոր Նախիջեւան քաղաքում: Այստեղ նրա ծախքով կառուցուած են 1782ին, վանք եւ եկեղեցի: Նա մասնակցել է այն Պատգամաւորութեան, որ նպատակ ունէր Վրաստանը ենթարկել Ռուսաստանի հովանաւորութեան, 1787ին: Բ. Դրան հետ մեր պատերազմի սկզբին ի վեր նա գտնւում էր մեր զօրքի հետ, եւ օգնում էր Օսմանեան Տէրութեան հետ կատարուած բանակցութիւններին: Այնուհետեւ նրան յանձնարարուած էր աշխատել Ռուսաստան տեղափոխել այն հայերին, որոնք Թրքական հպատակութեան տակ էին մնացել Բեսարաբիայում եւ մասամբ Մոլդավիայում, որոնցմով կազմուեց մի նոր քաղաք, Գրիգորոպոլիս կոչմամբ: 1796ին նա մեր բանակի հրամանատար կոմս Զուբովի հետ ուղարկուեց Պարսկաստան, որ շնորհիւ իր տեղական պարագաների հետ ծանօթութեան եւ Զրացի Խանների հետ ունեցած յարաբերութիւններին, օգնեց մեր զօրքին, թէ յառաջացմանն, թէ պաշարումանը, եւ թէ քաղաքների անձնատուութեանը, այնտեղ բնակուող Հայոց միջոցով: Նա համոզեց Դէրբէնտում եւ Մուսքուրում բնակող հայերին Ռուսաստան տեղափոխուել եւ վերջապէս նա ուղեկցեց մեր բանակին եւ մտաւ Վրաստան, ուր նա մնաց մինչեւ որ Պարսկաստանում ապատամբ Աղա Մահմէդը ի սպառ ջնջուեց:

«Մենք երախտագէտ ենք միշտ մեր այն բոլոր հպատակների հանդէպ, որոնք օգտակար են հանդիսանում Մեզ եւ հայրենիքին: Ուստի ի նկատի առնելով Մեր սիրելի հաւատարիմ հպատակ իշխան Արղութեան Երկայնաբազուկի այս եռանդուն ծառայութիւնները ի նպաստ Մեզ եւ հայրենիքին, Ամենակարող Աստուծմէ Մեզ շնորհուած ինքնակալական իշխանութեամբ հաստատում ենք Արղութեան Երկայնաբազուկ տոհմի ցայժմ վայելած իշխանական տիտղոսն եւ ամենաողորմածաբար բարձրացնում ենք, որոշում ենք եւ շնորհում Համառուսական Իշխանի արժանիք եւ հրամայում, որ այսուհետեւ նա, իշխան Արղութեան Երկայնաբազուկը (ռուսերէն՝ կնեազ Արղութինսկի Դոլգորուկով) եւ իր տոհմը, իր բոլոր տիտղոսներով եւ իրեն պատկանող պատիւներով, օգտուին, ստորագրեն եւ յարգուին իբրեւ Համայն Ռուսիոյ իշխաններ»:

«Իբրեւ վկայութիւն Մեր այս Բարձրագոյն կայսերական շնորհին, հաստատում ենք իշխան Արղութեան Երկայնաբազուկ տոհմի զինանշանը հետեւեալ նոր բովանդակութեամբ.

Վահանը երկու մասի է բաժնուած, վերեւից ներքեւ. ձախ կողմը՝ իշխան Արղութեան-Երկայնաբազուկների նախկին զինանշանը, այսինքն՝ վերեւ կարմիր դաշտում կայ մի ձեռք, որ ամպից դուրս է գալիս եւ բռնած է սուր, իսկ ներքեւում, կապոյտ դաշտում կայ առիւծ, եռաւոր ոտների վրայ նստած, որ աջ թաթովն ոսկեայ գնդասեղ է բռնած իսկ ձախովը ոսկեայ Վահան: Աջ կողմը՝ ի նշան Համառուսական Իշխանական տիտղոսի, Մենք ամենաողորմածաբար շնորհում ենք, որ գրուի ոսկեայ դաշտի մէջ Ռուսական Արծուի կէս մասը՝ արքայական թագով եւ դաւազանով, այն, որ կայ յանուն Ս. Յովհաննէս Երուսաղէմացւոյ պատուանշանի խաչի վրայ. իսկ այս խաչի մէջտեղում՝ կարմիր Վահանի մէջ Մեր Անունը արձանագրուի: Այս Վահանն էլ ծածկուի Իշխանական տիտղոսին յատուկ վերարկուով եւ թագով: Իբրեւ չօշափելի ապացոյց Մեր այս Վեհապետական Շնորհին մեր սիրելի հաւատարիմ հպատակ իշխան Արղութեան Երկայնաբազուկի եւ նրա տոհմի հանդէպ, Մենք, ամենաողորմածաբար բարեհաճեցանք Մեր սեփական ձեռքով ստորագրել այս հրովարտակն եւ հրամայեցինք, որ Պետութեան կնիքովն էլ ամրացուի: Տրուած է 22 Մարտ 1800ին, Սանկտ Պետերբուրգում, Մեր Վեհապետութեան չորրորդ տարին. նորին Կայսերական Մեծութիւնն իր սեպհական ձեռքով ստորագրած է՝ Պաւել»:

«Նորին Կայսերական Մեծութեան հրամանով եւ Պետական Ծերակոյտի կարգադրու-

© National Library of Armenia

թեամբ այս կայսերական հրովարտակի ներկայ պատճէնը հաստատուած եւ տրուած է՝ Ռուսաստանում բնակող Հայ ժողովրդի արքեպիսկոպոս եւ Ասպետ իշխան Արղութեան Երկայնաբազուկի հարազատ քեռորդի եւ եղբօրորդիներին՝ Վրաստանի զինուորական ծառայութեան մէջ գտնուող գնդապետ Սոլոմոն Բէժանովին եւ հազարապետներ Նիկոլայ Բէժանովին եւ Զաքարիա իշխան Արղութեան-Երկայնաբազուկին»:

30 Մարտ 1800:

Այս կայսերական հրովարտակի վրայ Մխարգրձելաձէ վրացական ազնուական տոհմն սկսած է այնուհետեւ կոչուել համառուսական իշխանական զարմ՝ Արգուտինսկի-Դոլգորուկով (Արղութեան Երկայնաբազուկ), պահպանելով ըստ առաջնոյն իր հայ դաւանութիւնը:

Վրաստանի կցումից յետոյ, վրացի ազնուականները հեղհեղէ ազերսագիր մատուցին ռուսական կառավարութեան, որ 1783ի ռուս-վրացական դաշնագրի համաձայն, նրանց ազնուականութիւնը ճանաչուի եւ հաստատուի: Այս պահանջին գոհացում տալու համար Կառավարութիւնը Տփղիսում Ցանձնաժողով նշանակեց խնդիրն ըստ էութեան քննելու եւ ազնուականութեան տիտղոսի վկայական տալու համար: Այսպիսի մի վկայական գտնում ենք նաեւ Արղութեանների սերունդից Լուարսաբին տրուած, որի բովանդակութիւնը հետեւեալն է:

ՎԿԱՅԱԿԱՆ

Տփղիսում բարձրագոյն կայսերական հրամանով հաստատուած Ցանձնաժողովը, որի պաշտօնն է վրացական իշխանական եւ ազնուական տոհմերին պատկանող անձերի խնդիրն ըստ էութեան քննել, որանով վկայում է, որ գուբէրնսկի սեկրետար իշխան Լուարսաբ՝ որդի Պողոսի Արղութինսկի-Դոլգորուկովի (փակագծի մէջ վրացերէն տառերով գրուած է՝ Արղուբաս շվիլի Մխարգրձելի — Արղութի որդի Մխարգրձելի) ճանաչուած է իբրեւ Արղութինսկի-Դոլգորուկով իշխանական տոհմին պատկանող: Այս տոհմը մտած է Իրակլէ թագաւորի ըստ 1783 ռուս-վրացական դաշնագրի կազմած Ցուցակում: Այս հաստատումը արձանագրուած է Ցանձնաժողովիս մատեանում 1848 Նոյեմբեր 16ին:

Այս կերպով, Նորին Մեծութեան Կայսեր 1846 Մարտ 30 հրամանագրի համեմատ, իշխան Լուարսաբ Արղութինսկի Դոլգորուկով իր ընտանիքով հանդերձ, թիւ 87 նշանագրով ներմուծուած է Վրացական Իշխանական եւ ազնուական անձերի ընդհանուր Ցուցակում:

Այս վկայականը տալում է իշխան Արղութինսկի Դոլգորուկովին, որպէս զի ի պահանջել հարկին գործածէ ի հաստատութիւն իր իշխանական տիտղոսին: Տփղիս 2 Մայիս 1849: Ստորագրել են՝ Ցանձնաժողովի նախագահ, ներկայացուցիչ Արդարութեան եւ ներքին Գործոց նախարարութիւնների, Անդամ՝ ներկայացուցիչ Անդրկովկասի Գլխաւոր Վարչութեան եւ Քարտուղարը [10]:

Արղութեան իշխանները, Ռուսական հպատակութեան մէջ եւս կարեւոր զինուորական պաշտօններ են վարել ռուսական բանակում: Այս զինուորականների մէջ առանձնապէս նշանաւոր է հանդիսացել իշխ· Մովսէս Արղութեան, որ ռուսական ամենամեծ պատուանշաններին է արժանացել: Նրա արշաւանքը Կովկասեան մահմեդական լեռնականների դէմ, անցեալ դարի միջնէջին եւ իր ամբողջ բանակովը ձմեռ ժամանակ Կովկասեան լեռների բարձր գագաթներն անցնելը համեմատուած է Նապոլէոն Բոնապարտի ձմեռ ատեն Ալպեան լեռներն անցնելով Իտալիան գրաւելուն: Արղութեանի այս ճարտար եւ հսկայական ձեռնարկութեան շնորհիւ է, որ լեռնականների հերոս Շամիլը յաղթահարուեց, գերի բռնուեց եւ հիւսիսային Կովկասը հպատակուեց Ռուսաստանին:

ՍԱՐՈՒԽԱՆ

---

[10] Թէ՛ այս վկայականի եւ թէ՛ վերեւ յառաջբերուած 30 Մարտ 1800 թուակիր կայսերական հրովարտակի պաշտօնական օրինակները տեսած եմ ռուս բանակի նախկին գնդապետ իշխան Միքայէլ Արղութեան-Երկայնաբազուկի մօտ, Նիսում (Գաղղիա) եւ ստացած նրանց պատճէնները, որի համար յայտնում եմ իշխ· Միքայէլին խորին շնորհակալութիւն: Ցավոք Արղութեանի եւ Արղութեան տոհմին ու զինանշանին մասին տեսնել՝ Գիրք որ կոչի ընդհանրական, արարեալ··· Տեառն Ներսէսի Շնորհալւոյ, Սանկտ Պետերբուրգ, 1788, էջ 317—336:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՆԹԷՈՆՆԵՐՈՒՄ

(Շարունակութիւն:)

Թիֆլիսի Վանքի Մայր եկեղեցում հանդէսում են պատմաշրջանի ռուսական բանակի զօրապետները, գնդապետներ, կոմսեր, սպաներ — որոնք իրենց ամբողջ կեանքը, ընդունակութիւնը նուիրել են ռուսական բանակի յաղթութեանը, իրագործել են իշխողների կամքը եւ թունաւորելով ժողովուրդների խաղաղ, շինարար, ստեղծագործական աշխատանքը, դժբախտացրել են միլիոնաւորների կեանքը: Ապագայ անաչառ պատմագիրը կ'արձանագրի նրանց հիւսած ողբերգական գործերի պատմութիւնը:

Կանգ եմ առնում նրանց շիրիմների առաջ եւ յիշում անցեալի տխուր էջերը: Ահա եւ նրանց պատկերը:

ԳՆԴԱՊԵՏ ԱՆԴՐԷԱՍ ՓԻՐԱԴԵԱՆՑ
(1814—1863)

Պարզ, թուխ կրանիտէ քարէ շրջանակով եղրած սպիտակ մարմարի ճակատին քանդակուած է մի խաչ, որի ներքեւում երկաթագիր տառերով փորագրուած է·

ԳՆԴԱՊԵՏ
ԱՆԴՐԷԱՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ
ՓԻՐԱԴԵԱՆՑ
1814—1863

Նոյնը փորագրուած է ռուսերէն լեզուով:

ԳԷՆԵՐԱԼ ԻՎԱՆ ԼԱԶԱՐԵՒ
(1820—1879)

Ռուս-տաճկական պատերազմի, գլխաւորապէս Ղարսի, հետ է կապուած այս զօրավարի անունը: Նշանակուելով Ղարսի բանակի գլխաւոր հրամանատար, նա կարճ ժամանակում պաշարեց եւ նուաճեց քաղաքը:

Խաչոր գեր է կատարել եւ Դաղստանի գրաւման գործում՝ 60ական թուականներին:

*

Հոգեկոյտի վրայ իշխում է մեծ եւ հաստ քառակուսի սեւ-թխադոյն մի մարմար, որի վրայ ռուսերէն փորագրուած է·

ԳԷՆԵՐԱԼ-ԱՏԻՒՏԱՆՏ
ԻՎԱՆ ԴԱՎԻԹՈՎԻՉ
ԼԱԶԱՐԵՎ
1820—1879

Ներքեւում հայերէն քանդակուած է·

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱՒԹԵԱՆ
ԼԱԶԱՐԵԱՆ

ԿՈՄՍ ՄԻՔԱՅԷԼ ԼՈՒՌՈՒ ՄԵԼԻՔԵԱՆ
(1824—1888)

Կովկասի ռուսական բանակի հրամանատարը, որի անունը սերտ կերպով կապուած է Ղարսի պատմութեան հետ:

Առաջին հայը, որ Ռուսաստանում նշանակւում է ներքին գործոց նախարար՝ Ալէքսանդր Երկրորդի ժամանակ:

Ժամանակի պահանջի համաձայն՝ կողմնակից է լինում բարենորոգութեանց: Այդ պատճառով էլ պահպանողական տարրերը նրան հալածում են եւ խիստ քննադատութեան ենթարկում:

*

Հաստարան մի նոճի հովանաւորում է նրա շիրիմը: Դա մէկուկէս մետր բարձր, քառակուսի ֆորմաներով քանդակուած, սեւ մարմար է, որի վերեւի մասում քանդակուած է մի խաչ, իսկ ներքեւում փորագրուած է·

ԿՈՄՍ
ՄԻՔԱՅԷԼ ԼՈՒՌՈՒ-ՄԵԼԻՔԵԱՆ
ԾՆԵԱԼ ՅԱՄԻ 1824 Ի 21 ՀՈԿՏ· ՀԱՆԳԵԱՒ ԱՌՏԷՐ Ի 1888 Ժ/2 ԴԵԿՏ· Ի ՆԻՑՑԱ ՔԱՂԱՔԻ

Նոյնը փորագրուած է նաեւ ռուսերէն լեզուով:

ՔԷՆԵՐԱԼ ԲԷՀԲՈՒԴ ՇԵԼԿՕՎՆԻԿԵԱՆՑ
(1837—1878)

1877—1878 թ· ռուս-թրքական պատերազմի Կովկասեան բանակի հայ զօրապետը:

*

Երկաթեայ ծաղկահիւս գեղեցիկ մի մեծ վանդակապատում իշխում է կարմիր-փայլուն մի մարմար: Դա պատուանդանն է, որի վրայ բազմել է մոխրագոյն, քառակուսի մի մարմար քար, մեծ խաչով զարդարուած: Մարմարի հարաւային կողմը ոսկեզօծ տառերով փորագրուած է·

© National Library of Armenia